# ԿՈՉ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Սուրբ Էջմիածինը, հայության սիրտը, խոցված է վշտով ի լուր այն խժդժություններուն, որոնք վերջին ամիսներուն տեղի ունեցան Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի հայ գաղութի ծոցին մեջ, խլելով տասնյակ զոհեր՝ մեռյալներ ու վիրավորներ:

Հայ մարդիկ, հարազատ զավակները նույն ժողովուրդին և նույն Եկեղեցիին, ժառանգորդները Ս. Լուսավորչի և Ս. Մեսրոպի, իմաստ չունեցող կիրքերով կուրացած, զինված հրով ու սրով, խավարի անհույս ուղիներուն վրա, իրենց եղբայրներու կյանքի լույսը կմարեն:

Հայ մարդը երբեք այսքան աննպատակ կերպով արյուն չէր թափած:

Հայ մարդը երբեք այսպիսի «ոչ իմանալի մահ» չէր ունեցած:

Արդյոք Մեր զավակներեն ոմանք այսքան հեռո՞ւ են մեր Տիրոջ և Փրկչի սիրո Ավետարանեն, և այսքան շո՞ւտ մոռցան պատմությունը հայոց և մեր Գողգոթան:

Բոլորս անխտիր, Հայ Եկեղեցի և հայ ժողովուրդ, Մայր Արաքսի ափերեն մինչև ափերը հեռավոր երկիրներու, ուր կապրին պանդուխտ զավակները Մեր, այսօր սուգի մեջ ենք, տխուր, սրտաբեկ և ամոթահար:

Ամենուն վիշտը Մեր սրտին մեջ առած, Մենք կողբանք բոլոր զոհերը եղբայրասպան այս ողբերգության, ու Փրկչի Իշման Ս. Սեղանի առաջ կաղոթենք անոնց հոգիներուն հանգստության և խաղաղության համար:

Կաղոթենք նաև, որ բարին Աստված Ս. Հոգիով մխիթարե ինկած զոհերուն հարազատները ու թեթևցնե անոնց ծանր սուգը:

Եվ գոնե մասամբ սփոփանք մը բերելու զգացումով, Մեր համեստ միջոցներով կուզանք 25 000 լիբանանյան ոսկի տրամադրել զոհերուն կարոտյալ ընտանիքներուն, որբերուն ու այրիներուն, իբրև հայրական օգնություն:

Մեր խոսքը ուղղելով համայն Լիբանանի մեր Ս. Եկեղեցվո հավատացյալներուն, Մենք, իբրև Հայրապետ Ամենայն Հայոց, սրտագին կոչ կընենք Մեր բոլոր հոգևոր զավակներուն անխտիր, որ կանգ առնեն և ետ դառնան

կորստյան ճամբաներին և ընդմիշտ հրաժարին եղբայրատյաց արարքներե, որոնք ոչ միայն բարոյապես դատապարտելի են, այլև անպատվաբեր ու նվաստացուցիչ մեր Ազգի համար, նաև օտար հյուրընկալ ժողովուրդներու և պետություններու:

«ԱՍՏՈՒԱԾ ԶՕՐՈՒԹԵԱՆՑ, ԴԱՐՁՈ՛ ԶՄԵԶ, ԵՐԵՒԵՑՈ՛ ԶԵՐԵՍՍ ՔՈ Ի ՄԵԶ ԵՒ ԿԵՑՑՈՒՔ» (Սաղմ. ՀԹ 8):

Կոչ կընենք բոլորին, որ իբրև օրինապահ ու կարգապահ քաղաքացիները Լիբանանյան հայրենիքին, առիթ չստեղծեն ներքին խռովության ու անկարգության, այլ իրենց խոհական կեցվածքով ու իմաստուն գործերով առավել նպաստեն իրենց բնակած երկրի ներքին խաղաղության և հայրենասիրական միասնության:

Սփյուռքի հայ ժողովուրդը ուր որ ալ գտնվի, իբրև կյանքի կանոն և իր գոյության իբրև պայման, պետք է հեռու մնա ամեն տեսակ քաղաքական փորձություններե և կուսակցական ծայրահեղություններե, և ապրի խաղաղ, համերաշխ՝ իբրև կրոնական համայնք, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո մի և անբաժանելի միության կենարար սկզբունքով զոդեպինդ:

Ավետարանական սիրո և ազգային-եկեղեցական միասնության ճանապարհը միայն կրնան Մեր պանդուխտ զավակները առաջնորդել դեպի փրկություն և խաղաղություն:

«ՔԱՋԱԼԵՐԵՑԱՐՈՒՔ ԵՒ ԶՕՐԱՑԻՆ ՍԻՐՏՔ ՁԵՐ, ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՅՔ ՅՈՒՍԱՑԵԱԼ ԷՔ Ի ՏԷՐ» (Սաղմ. ԼԱ 25):

Սիրելի՛ք և հարազատնե՛ր Մեր, Ձեզ բոլորիդ անխտիր հայրական սիրո ողջույն և հայրապետական օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ. ԱՄԷՆ»:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն
8 դեկտեմբեր 1958